Մարիամ Խաչատրյան, *մագիստրոս*
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. – գիտակրթական համակարգ, բարձրագույն կրթություն, բուհ

Համալիր կրթության համակարգում մեծ նշանակություն ունի բարձրագույն կրթությունը, որը ուղղակի կամ անուղղակի ձևով կապված է տնտեսության, գիտության, տեխնոլոգիայի և մշակութային հասարակության հետ: Այդ իսկ պատճառով գիտակրթական համակարգի զարգացումը հանդիսանում է ընդհանուր ազգային տնտեսության զարգացման ռազմավարության ամենակարևոր տարրերից մեկը:

21-րդ դարում անհրաժեշտ է հստակ և գիտակից ձևով պատկերացնել, թե ինչպիսին պետք է լինի բարձրագույն մասնագիտական կրթությունը և թողարկված մասնագետները ապագայում:

Հայտնի է, որ մասնագետների պատրաստման հանդեպ պահանջները չեն ձևավորվում գիտակրթական համակարգում, այլ դրանք առաջանում են ընդհանուր պետության տնտեսական և հասարակական նպատակներից ելնելով:

Բարձրագույն կրթության լավագույն գործարկումը պայմանավորված է այդ ոլորտի զարգացմամբ:

Համաձայն Յունեսկոյի 20-րդ համաժողովի բնորոշման կրթություն ասելով հասկանում ենք անհատի ունակությունների և վարքագծի կատարելագործման գործընթաց և արդյունք:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով մի քանի տարածաշրջանային տնտեսական միավորումների անդամ երկիր, արդեն իսկ որոշակի չափով մասնակցում է երկրների գլոբալացման գործընթացին: Գլոբալացման գործընթացը իրենից ենթադրում է տվյալ երկրի տնտեսության, կրթության, առողջապահության, անվտանգության և բոլոր այլ ոլորտների ստանդարտացում և համաձայնեցում միջազգային ստանդարտներին: Երրորդ կարգի երկրների համար, որոնք գխավորապես չունեն բնական ռեսուրսներ և նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրք, գլոբալ շուկային ինտեգրվելու ամենաարդյունավետ տարբերակը գիտակրթական համակարգի կատարելագործումն է: Մարդկային ռեսուրսները համարվում են անսպառ ռեսուրս, և քանի որ ՀՀ-ում առկա են բոլոր անհրաժեշտ նախապայմանները մարդկային կապիտալի զարգացման և կատա-

ռելագործման համար, ուստի գիտակրթական համակարգը այն ամենակարևոր ոլորտներից մեկն է, շնորհիվ որի կարելի է զարգացնել երկրի տնտեսությունը, առաջացնել այլ երկրների հետաքրքրությունը դեպի ՀՀ կրթական ոլորտ, «արտահանել» կրթական և գիտական արդյունքը, կապեր և համագործակցություն հաստատել այլ երկրների կրթական ոլորտի ներկայացուցիչների հետ:

ՀՀ-ում գործում է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարություն, որն իրականացնում է ամբողջ երկրի (ներառյալ ՀՀ մարզերը) կրթական ոլորտի համակարգում, բարելավում, ազգային և միջազգային կրթական ծրագրերի և միջոցառումների պլանավորում և դրանց իրականացման վերահսկողություն:

ՀՀ կրթական ոլորտի բաղկացուցիչ մաս են կազմում հետևյալ հաստատությունները.

- Մանկապարտեզները
- Նախակրթարանները
- Հանրակրթական դպրոցները
- Միջին մասնագիտական հաստատությունները
- Բարձրագույն ուսումնական հաստատությունները
- Գիտական դպրոցները

Կրթական ոլորտի բոլոր հաստատությունները ունեն հստակ սահմանված ծրագրեր, որոնց իրականացումով պայմանավորված է ընդհանուր կրթական համակարգի արդյունավետ գործունեությունը: Վերոնշյալ հաստատություններից յուրաքանչյուրն ունի կարևոր նշանակություն, սակայն առավել մանրամասն անդրադառնանք բարձրագույն կրթության ոլորտին, քանի որ այն կրթական համակարգի առանցքային տարրն է, որից անմիջապես կախված է երկրի մասնագիտական և գիտական ներուժը: Բարձրագույն կրթությունը ապահովում է որակյալ մասնագետների պատրաստում համապատասխան աշխատաշուկայում առկա պահանջարկին: Այս տեսանկյունից մեծապես կարևորվում է բուհերի դերը: ՀՀ ում տարբերում ենք բուհերի հետևյալ տեսակները. պետական բուհեր իրենց մասնաճյուղերով (թվով՝ 30), ոչ պետական՝ մասնավոր բուհեր (թվով՝ 26), միջպետական բուհեր (թվով՝ 4), չհավատարմագրված՝ հավատարմագրված մասնագիտություններով բուհեր (թվով՝ 6), չհավատարմագրված բուհեր (թվով՝ 31) և արտերկրի բուհերի մասնաճյուղեր (թվով՝ 9)[1]: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում գործում են մի քանի տեսակի բուհեր, կարևոր նշանակություն ունեն

[1] Տես՝ http://hy.wikipedia.org

հատկապես պետական բուհերը, որոնք լիցենզավորված են պետության կողմից՝ կրթելու, վերապատրաստելու և դաստիարակելու որակյալ մասնագետներ: Սակայն կարևոր հանգամանք է նաև, որպեսզի բուհերը համաչափ տեղաբաշխված լինեն ՀՀ մարզերում և.ս. դա տարածաշրջանային համաչափ զարգացման խնդրի լուծման առաջնային լուծումներից մեկը կարող է լինել: Այսօր արդեն մարզերում գործում են որոշ պետական բուհերի մասնաճյուղեր, որոնք իրենց շուրջ կարողանում են համախմբել մարզի երիտասարդներին, ինչն էլ իր հերթին նպաստում է հնարավորինս մինիմալ ծախսերով ստանալ որակյալ կրթություն, և միաժամանակ թուլանում է մայրաքաղաքի բուհերի ծանրաբեռնվածությունը: Մարզերում բուհերի առկայությունը ունի նաև տնտեսական մեծ նշանակություն. այն հնարավորություն է տալիս մարզի գործատուներին գտնել պատրաստի որակյալ կադրեր, որոնք կլինեն մարզից:

Որպես օրինակ այս աշխատանքում կքննարկենք ՀՀ Վայոց ձորի մարզում գործող Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի նորաստեղծ մասնաճյուղի գործունեությունը, նպատակը և կառաջարկենք զարգացման նոր միտումներ:

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղը հիմնադրվել է 2007 թ. ՀՀ կառավարության որոշմամբ: Իր գործունեության 7 տարիների ընթացքում այս բուհը հասցրել է ունենալ բավականին մեծ հեղինակություն և արդյունավետ գործունեություն, և սկսած 2012 թվականից թողարկում է իր բակալվրիատի առաջին շրջանավարտներին, իսկ 2014 թվականին՝ առաջին մագիստրատուրայի շրջանավարտներին: Կատարելով վերլուծություն մասնաճյուղի շրջանավարտների շրջանում, կարելի է աղյուսակի տեսքով ներկայացնել բուհի շրջանավարտների թիվը սկսած 2012 թվականից: (Տես՝ աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի շրջանավարտների թիվը ըստ տարեթվերի (ուսանող)

Տարեթիվ	Առկա բակալավրիատ ուսանող	Առկա մագիստ-րատուրա ուսանող	Հեռական բակալավրիատ ուսանող	Ընդհանուր
2012	26	0	0	26
2013	25	0	0	25
2014	41	28	0	69
Ընդամենը՝ 120				

Աղյուսակից պարզ է դառնում, թե որ տարեթվին քանի շրջանավարտ է ունեցել բուհը և ելնելով այս տվյալներից՝ կարելի է տոկոսային հարաբերակցությամբ ներկայացնել, թե բուհի շրջանավարտների քանի տոկոսն է տեղավորվել աշխատանքի բուհն ավարտելուց անմիջապես հետո և հատկապես տնտեսության որ ոլորտում են աշխատում այդ շրջանավարտները (Տես՝ աղյուսակ 2)[2]:

Աղյուսակ 2

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի շրջանավարտների դասակարգում ըստ տարեթվերի և ոլորտների (տոկոս)

Տարեթիվ	Ֆինանս. ոլորտ	Զբոս. ոլորտ	Կրթ. ոլորտ	Պետ. ոլորտ	Մասն. ոլորտ	Այլ ոլորտ	Չեն աշխատում
2012	57	3.8	3.8	0	7.6	15.3	11.5
2013	4	8	4	4	12	48	20
2014	21.7	8.6	2.8	7.2	11.5	24.6	23.1

Աղյուսակ 2-ում մանրամասն ներկայացվել է, թե հատկապես որ ոլորտում են աշխատում շրջանավարտները, և անդրադարձ է կատարվել հենց այդ ոլորտներին, քանի որ բուհը պատրաստում է կադրեր ֆինանսական (մարզում գործում են մի քանի բանկերի և վարկային, ապահովագրական կազմակերպությունների մասնաճյուղեր), զբոսաշրջության (Վայոց ձորի մարզը ՀՀ Կառավարության ծրագրով հանդիսանում է զբոսաշրջոության զարգացման կենտրոն՝ հատկապես Ձերմուկ քաղաքը, Վայք քաղաքում գործում է զբոսաշրջության կենտրոն, մարզում գործում են առողջարաններ, հյուրանոցներ, B&B-ներ), հաշվապահական հաշվառման, կառավարման ոլորտների համար, ուստի, վերլուծելով վերոնշյալ թվերը, կարելի է ենթադրել, որ բուհը որոշակի չափով ապահովել է շրջանավարտների գիտելիքների համապատասխանությունը պահանջվող աշխատատեղերին: Սակայն այս գործընթացը կրում է շարունակական բնույթ, և որպեսզի ավելի մեծ թվով շրջանավարտներ կարողանան աշխատանք գտնել իրենց մասնագիտությանը համապատասխան, անհրաժեշտ է, որ բուհը պլանավորի և իրականացնի նոր կրթական, գիտական, վերապատրաստողական ծրագրեր:

Այդպիսի ծրագրերից կարող են լինել.

[2] Աղյուսակի տվյալները վերցված են ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրինությունից

- Ուսումնական պլաններում՝ համապատասխան անցկացվող դասընթացի թեմայի, անցկացնել գործնական դասեր մարզում գործող հաստատություններում
- Բուհական ծրագրերում ավելի խորապես անցկացնել օտար լեզուների և համակարգչային գիտելիքների ուսուցումը
- Մշտապես կազմակերպել աշխատանքի տոնավաճառներ, որտեղ մարզի գործատուները կկարողանան ներկայացնել թափուր աշխատատեղերը և գտնել համապատասխան մասնագետների
- Իրականացնել օնլայն արտալսարանային դասեր այլ հայաստանյան և արտասահմանյան բուհերի հետ
- Ակտիվորեն համագործակցել մասնավոր և պետական հատվածի գործատուների հետ, նրանց տրամադրելով տեղեկատվություն շրջանավարտների քանակի, և նրանց ունեցած գիտելիքների որակի մասին՝ համապատասխան համակարգչային տեղեկատվական բազա ստեղծելու միջոցով
- Իրականացնել գործատուների վերապատրաստման դասընթացներ՝ հրավիրելով առաջատար մասնագետներ արտասահմանից (այս հանգամանքը կարևորվում է նրանով, որ ՀՀ-ում գործող մասնավոր և պետական ոլորտի գործատուների մեծ մասը միջին տարիքի է և քանի որ նրանք մեծ մասամբ ունեն սոցիալիստական մտածելակերպ և հնացած գիտելիքներ կազմակերպության գործունեության ճիշտ և արդյունավետ կազմակերպման ոլորտում, ապա վերապատրաստումները կօգնեն նրանց զինվել թարմ գիտելիքներով և իրենց կազմակերպության զարգացման հիմքը համարել կրթական մակարդակը)

Ամփոփելով այն գործունեությունը, որն իրականացնում է բուհը և այն գործոնները, որոնք կարելի է կիրառել զարգացման համար, կարելի է եզրակացնել, որ բուհի ռազմավարությունը պետք է առավելապես համապատասխանի տարածաշրջանում առկա աշխատատեղերի նկատմամբ պահանջարկին, ինչպես նաև հնարավորություն տա բուհի շրջանավարտին ստանալու այնպիսի կրթություն, որը կարելի է կիրառել ոչ միայն ՀՀ տարածքում, այլ նաև միջազգային ասպարեզում:

АННОТАЦИЯ

Мариам Хачатрян, *магистр*
АГЭУ Ехегнадзорский филиал

ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Республика Армении является одной из стран, которые имеют ограниченные ресурсы и ищут альтернативы для экономического развития. В настоящее время в качестве такого ресурса считается знание и наша страна имеет все необходимые условия, ресурсы и инфраструктуры для развитие и совершенствование этого сектора. Правильное и эффективное использование всех компонентов сферы образования приведет к развитию почти всех секторов экономики Республики Армении и способствует к интеграции в мировой рынок.

ANNOTATION

Mariam Khachatryan, *magistr*
ASUE Yeghegnadzor branch

THE DEVELOPMENT FEATURES OF SCIENTIFIC AND EDUCATION SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA

The Republic of Armenia is one of the countries, which have limited resources and are looking for alternative ways for economic development. Currently such resource is knowledge and our country has all the necessary conditions, resources and infrastructure for the development and improvement of this sphere. Correctly and effectively use of all the ingredients of educational sphere will lead to the development of almost all sectors of the economy of Republic of Armenia and integration in global market.